# ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ



«Մոնթե Մելքոնյան» հիմնադրամի նախաձեռնությամբ նոյեմբերի 25-ին «Նաիրի» կինոթատրոնի շենքում տեղի ունեցավ հուշ-երեկո՝ նվիրված նրա ծննդյան 37-ամյակին: Կինոթատրոնի նախասրահը զարդարված էր Մոնթեին նվիրված ցուցավահանակներով, որոնք ներկայացնում էին հերոսի կյանքի տարբեր ժամանակահատվածները: Տեսասրահում անընդմեջ ցուցադրվող տեսաժապավենները ներկայացնում էին տարբեր հեռուստաընկերությունների Մոնթեի տված հարցազրույցներն ու արցախյան շրջանի նկարահանումները: Իրենց ընկերոջ եւ հրամանատարի հիշատակի երեկոյին մասնակցում էին զինակիցներն ու բարեկամները, պաշտպանության նախարարության եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները: Երեկոյի ընթացքում ցուցադրվեց Մոնթեի մասին պատմող վավերագրական ֆիլմ:

ՓԱՍՏ